### Տող եկեղեցւոյ և 'ի տաճարն սուրբ ։

ԶՕՐՔ 'ի վերուստ իջեալ առ Սողոմոն արքայն,
Ճոխէին զտաճարն, տաշէին ըզփայտն,
Քերէին ըզքարն առ ձեռնադրեալ փայտին ։
Դղրդեցաւ երկիր, հռչակեցան լերինք,
Պատառեցաւ արձանքն, 'ի ձայնէ ուռնադղորդ ճայթմանցն .

Երկոտասան նիւթից, երեքտասան կողմանց,
Չորեքտասան մասանցն, կապուտակ նիւթիցն,
Զնոյն քարոզէին . ըզվարոն հաստանէին,
Ի ներքնական սեմոցն՝ զարծաթապատ բևեռքն
Ի լըծակէ լըծակ ։

Մըտանէր Քփրիմ արքայն 'ի տունըն տէրունական,
Տեսանէր Քփրիմ արքայն ըզզարդ զամենայն գունիցն .
Ըզշողն և ըզշուշան, ըզյորդանն և ըզքացագոյն սպիտակն,
Ընդնդահոս վըտակ, հաւ թիթղունս արկեալ,
Զայն մարգարտով կազմէր, շողանման կապէր
Ի կողակէ կողակ ։

Քանի՞ թիւ կողեկացն, քանի՞ թիւ խորանացն,
Քանի՞ թիւ կամարացն, քանի՞ թիւ կանթեղացն .
Քանի՞ թիւ վարագուրացն, և քանի՞ թիւ զանկակացն ։
Հազար թիւ կողակացն, հազար թիւ խորանացն,
Հազար թիւ կամարացն, հազար թիւ կանթեղացն,
Հազար թիւ վարագուրացն և բիւր մի զանկակացն ։

Տաճարն այն ո՞ւմ նման է, աճառքն այն ո՞ւմ նման է .
Մարդակքն այն ո՞ւմ նման է, գերանքն այն ո՞ւմ նման է .
Խոյակքն այն ո՞ւմ նման է, սիներն այն ո՞ւմ նման է .
Խարիսքն այն ո՞ւմ նման է, և տաճարն այլ ո՞ւմ վայել է ։

Աճառքն մարտիրոսացն, մարդակքն մարգարէիցն,
Գերանքն քերովբէիցն, խոյակքն առաքելոցն,
Սիներն սերովբէիցն, խարիսխն սրբոյ կուսին .
Տաճարըն վայել է փրկչին ։

Քարշէին ըզլարն, հնչէին զանկակքն,
Դղրդայր տաճարն, ճոխայր ճախարակքն .
Ցնծայր Սողոմոն արքայն ։
Երգս 'ի բարձունս երգէին նուագելով,
Եւ գոչէին ասելով, Ալէլուիա ։